# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 ,
darpas.lori@mta.gov.am

N 32
*07 փետրվար 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ ենք ենք ներկայացնում Դարպաս համայնքի ղեկավարի թիվ 13ից 15 որոշումները:
Առդիր՝ 1 ֆայլ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Արմեն Ալոյան**

*Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ն. Ալոյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 թվականի N 13

## ՀՈՂԱՄԱՍԻ և ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29092014-06-0030 վկայականը, քաղաքացի Ա. Միտիչյանի դիմումը, Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 13.11.2017թ. թիվ 135 եզրակացությունը, Համայնքի ավագանու 11.12.2017թ. թիվ 34 որոշումը հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխելու թույլտվություն տալու մասին, Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 02/02/2002թ. Թիվ 88 որոշմամբ,Իրավական ակտերի 72 հոդվածով

Որոշում եմ

1.Դարպաս համայնքի 1 փողոց, թիվ 36/1 փոստային հասցեում գտնվող և Արամ Մուքելի Միտիչյանին սեփականության իրավունքով պատկանող 06-033-0001-0029 ծածկագրի տակ գտնվող 0.1 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը համաձայն Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 13.11.2017թ. թիվ 135 դրական եզրակացության և համայնքի ավագանու որոշման փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:

2.Նպատակային նշանակությունը փոփոխված կառուցապատված հողամասում գտնվող և իրավունքի պետական գրանցում ստացած վարչական շենքի գործառնական նշանակությունը գործող օրենսդրությանը համապատասխան փոփոխել որպես բնակելի նշանակության շինության՝ բնակելի տան,իսկ 231.14 քմ մակերեսով արտադրամասի նշանակությունը փոփոխել անասնագոմի:

3.Շինությունների գործառնական նշանակությունը փոփոխված է առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ շինարարական աշխատանքներ չեն կատարվել, ըստ որի շինարարության թույլտվություն տրամադրելու անհրաժեշտություն չկա /ՀՀ կառավարության 19/03/2015թ. թիվ 596-Ն որոշում/:

4.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 19.12.2017թ. թիվ 83 և 18.01.2018թ. թիվ 06 որոշումները:

5.Գործառնական նշանակությունը փոփոխված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

6.Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Սույն որոշումը ենթակա է պետական գանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 14

## Մ.Ռ.ՓԱՓԱԽՉՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աշխատանքային օրենսգրքի» 109 հոդվածի 1 կետի 3 ենթակետով և հիմք ընդունելով Մ.Ռ.Փափախչյանի դիմումը.
Որոշում եմ.

1.Դարպասի համայնքապետարանի հավաքարար՝ Մարիետա Ռաֆիկի Փափախչյանին ազատել աշխատանքից ս/թ փետրվարի 1-ից և լուծված համարել նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2.Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Անահիտ Վարդանյանին հաշվարկել և Մարիետա Փափախչյանին վճարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 15

## Ս.Ի.ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սինամ Վանեսյանի դիմումը.

Որոշում եմ

1.Սինամ Իսրայելի Վանեսյանին 2018 թվականի փետրվարի 02-ից ընդունել աշխատանքի Լոռու մարզի Դարպասի համայնքապետարանում, որպես հավաքարար՝ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:
2.Աշխատավարձի չափը սահմանվում է համաձայն Դարպաս համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

20 __ թ. ____________ ____
գ.Դարպաս